թյան պարագան,

դ/ ռեպերտուարի ձևավորման գործում նշանակալից դեր է խաղում բանասացի զբաղմունքը,

ե/ բանահյուսական որոշ ժանրերի / արձակ-պատմողական տեսակներ/ կենցաղավարումը կապված է հավաքատեղիների ավանդույթի հետ:

4. Մեր կողմից երեք տարվա ընթացքում գրանցվել են տարբեր ժանրերի բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ / 54 միավոր/, հանելուկներ / 85-90 միավոր/, անեկդոտներ-զրույցներ / 36 միավոր/, խաղիկներ /70 միավոր/, օրհնանքներ / 37 միավոր/, երգեր/աշուղական, կենցաղային, սիրո, եղերերգ, 25 միավոր/, սիրավեպ / 4 միավոր/, ինչպես նաև ծեսեր, սովորույթներ, հուշապատումներ, բանաձևային միավորներ, անեծքներ և այլն:

5. Բանահյուսական նյութի նախնական քննությունից հետևում է , որ՝

ա/ ավանդական բանաձևային և չափածո ժանրերը խիստ կայուն են,

բ/ երգի տեսակներում հնին զուգահեռ ստեղծվում են նոր մոտիվներ / հատկապես կենցաղային երգերում/,

գ/ հեքիաթներում ի հայտ են գալիս նորամուծություններ/կապված լեզվի, կենցաղի փոփոխության հետ, անցումը հրաշապատումից իրապատումի/,

դ/ հեքիաթային որոշ սյուժեներ ներկայացվում են որպես իրապատում հուշեր և, ընդհակառակը՝ իրական հուշապատումները որպես հեքիաթներ:

Ժաննա Խուրշուդյան

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ
/ ըստ 1972- 79թթ. գործուղման արդյունքների/

1. Մարտակերտը /պատմական Ջրաբերդը, Ծարի և վերին Խաչենի մի մասը/ տարածքով և հայաբնակ գյուղերի քանակով/56/ Լեռնային Ղարաբաղի ամենամեծ շրջանն է: Այն ունի հարուստ պատմական անցյալ և հուշարձաններ / Գանձասար, Երից Մանկաց վանք, Խոթավանք,Խաթրավանք, Մեսիս, Աստղաբլուր, Կաչաղակաբերդ և այլն/: Այստեղ են գտնվում մարզի ամենաբարձր լեռնագագաթները / Մռով, Քիրս/ և ամենամեծ գետը / Թարթառ/:

Բնակչության մեծ մասը տեղացի է, մի քանի գյուղեր վերաբնակեցված են Պարսկահայքից, Գանձակից և Ղարաբաղի մյուս շրջաննե-

րից գաղթած հայերով: Կան նաև ոչ հայկական գյուղեր/աղրբեջանցիներ, մոլոկաններ, հույներ/:

Նշված երևույթները շրջանի բանահյուսական ավանդների համար ունեն որոշակի նշանակություն:

2. Մարտակերտի բանահյուսությունը, համեմատած մարզի մյուս շրջանների հետ, քիչ է ուսումնասիրված / կան մի քանի նմուշներ երկու-երեք գյուղից/:

Դաշտային պարբերական հետազոտությամբ ընդգրկել եմ 17 գյուղ, ձայնագրել շուրջ տաս հազար մետր ժապավեն նյութ՝ բանահյուսական բոլոր ժանրերից: Նյութերի քանակական պատկերը մոտավորապես հետևյալն է. զվարճախոսություններ՝ 220 միավոր, հեքիաթներ՝ 170, ավանդույթներ՝ 70, առակներ՝ 30, զրույցներ՝ 20, հուշապատումներ՝ 10, բանաձևային ժանրեր՝ հազար, տարբեր բնույթի երգեր՝ 60, խաղիկներ՝ 200 և այլն: Գրանցել եմ նաև պարեր, մեղեդիներ և որոշ ծիսակատարություններ:

3. Նյութերի գրանցումը կատարվել է նախօրոք ծրագրված գիտական նպատակադրումով: Ուշադրության են առնվել հետևյալ խնդիրները:

ա/ Բանահյուսության կենցաղավարման առանձնահատկությունների կապը աշխատանքային պահերի, սեռա-տարիքային խմբերի և որոշ ծիսակատարությունների հետ:

բ/ Բանասացը և ժամանակը:

գ/ Ժանրը և բանասացը:

դ/ Ժանրը և բանասացների սեռա-տարիքային խմբերը:

ե/ Բանասացի մասնագիտությունը, կրթական մակարդակը և բանահյուսությունը:

զ/ Բանասաց-բանահավաք կապը:

է/ Բանահյուսության ժառանգումը բանասացի սերունդների կողմից / ծնող-զավակ-թոռ/ և այլն:

4. Ժանրային-քանակական տվյալները կարելի է համարել և որպես բանահավաքչության ընթացքում եղած հնարավորությունների դրսևորում:

Տվյալները վկայում են, որ արձակն ու բանաձևային ժանրերը մեծ տոկոս են կազմում: Զափածոյի քանակը տվյալ ազգագրական շրջանի համար պետք է համարել բարձր ցուցանիշ:

5. Նյութերի մեծ մասը Նորություն է: Ուշադրության են արժանի հատկապես զուլթաներգ-հորովելները, կթվորի երգերը, սգերգերը,

առասպելաբանական ավանդությունները, ժողովրդական սպառնալիքները, որոշ հեքիաթներ, առակներ, զվարճախոսություններ, ինչպես նաև տարբերակները:

Նախատեսված է շարունակել շրջանի դաշտային գյուղերի բանահյուսական ավանդույթների հետազոտումը, իսկ որոշ խնդիրների պարզաբանման համար նպատակահարմար է կատարել ստացիոնար գրառումներ:

Արմենուհի Ստեփանյան

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԱՐԱԽՃԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ
/ ըստ ՀՊՊԲ ազգագրական Ֆոնդերի նյութերի/

1. Հայ ժողովրդական տարազի բաղկացուցիչ տարրն են կազմել արախչիները, որոնց զարդանախշերի քննությունը բացահայտում է դրանց աղերսը հավատալիքային պատկերացումների հետ: Այս առումով ուշագրավ են տղամարդկանց արախչիները, որոնք զարդանախշերի հարստությամբ ու բազմազանությամբ մի ուրույն խումբ են կազմում:

2. Արախչիները, ըստ զարդաձևերի, մի կողմից դրսևորում են որևէ պատմա-ազգագրական շրջանի բնորոշ տեղական ուրույն գծեր, մյուս կողմից երևան են բերում ընդհանրապես հայ ժողովրդի մտահայեցողությանը, նրա մշակութային ավանդույթներին բնորոշ ընդհանրություն:

3. Արախչիների զարդանախշերի գույներում գերակշռում են կարմիր, կանաչ ու կապույտի մուգ և բաց երանգները, որոնք ամենայն հավանականությամբ առնչվում են գույների վերաբերյալ ունեցած ժողովրդական պատկերացումների հետ:

4. Արախչիներն ասեղնագործված են երկրաչափական զարդանախշերով, ի տարբերություն տարազի մյուս բաղկացուցիչ մասերի, որոնք հարուստ են նաև բուսանախշով ու կենդանական նախշով:

5. Արախչիների զգաթային մասի նախշաձևերի մեջ կայուն կերպով պահպանվում են որոշակի պատկերներ, որոնք առնչվում են տակավին նախադարից եկող պատկերացումների հետ և զուգահեռներ ունեն հնագիտական նյութերում: Այդ նախշաձևերն իրենց արտաքին տեսքով հարատևելով մինչև մեր դարի առաջին քառորդը, ամենայն հավանականությամբ, արդեն չեն ընկալվել այն բովանդակային ու գաղափարական իմաստով, ինչ ունեցել են հնում: